Բ. Ս. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

1917 թվականի հոկտեմբերին բոլշևիկների կուսակցության գլխավորած բանվորների և գյուղացիների, զինվորների և նավաստիների զինված ապըստամբության շնորհիվ, մեծ Լենինի ղեկավարությամբ Ռուսաստանում հաղթանակեց սոցիալիստական հեղափոխությունը։ Մարդկության պատմության մեջ առաջին անգամ տապալվեց շահագործական հասարակարգը։ Ստեղծվեց պրոլետարիատի դիկտատուրա, որի քաղաքական հիմքը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն էր։ Ստեղծվեց պետության նոր տիպ՝ սովետների սոցիալիստական հանրապետություն, դեմոկրատիայի նոր տիպ՝ դեմոկրատիա աշխատավորների համար։

Կապիտալիզմից կոմունիզմին անցնելու հարցերի գիտական խորը վերլուծությունը տվել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Այդ հարցերը լուսաբանվել են «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում», ապա 1852 թ. մայիսի 5-ին Վայդեմերին Մարքսի գրած նամակում, «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ և Բրակկերին 1875 թ. մայիսի 5-ին ուղարկած նամակում։

Վերլուծելով կապիտալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափությունները և պատմական անխուսափելի անհրաժեշտությունը, Մարքսը հանգում է այն հանճարեղ եզրակացության, որ կապիտալիզմի և կոմունիզմի միջև ընկած է մի ժամանակաշրջան, «երբ առաջինը հեղափոխական ձևով փոխակերպվում է երկրորդին։ Այդ ժամանակաշրջանին համապատասխանում է անցման մի քաղաքական ժամանակաշրջան, և այդ ժամանակաշրջանի պետությունն ուրիշ ոչինչ չի կարող լինել, բացի պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայից»[1]*։ Այսպիսով, կապիտալիզմի և կոմունիզմի միջև Մարքսը նախատեսում էր պատմական մի անհրաժեշտ ժամանակաշրջան, որը կոչվում է սոցիալիզմ, որի պետական ձևը պետք է լինի պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան։*

«Մարքսի այս եզրակացությունը հիմնված է այն դերի վերլուծության վրա,— գրել է Լենինը,— որ խաղում է պրոլետարիատն արդի կապիտալիստական հասարակության մեջ, հիմնված է այդ հասարակության զարգացման և պրոլետարիատի ու բուրժուազիայի հակադիր շահերի անհաշտելիության տրվյալների վրա»[2]*։*

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները վերլուծելով կապիտալիստական հասարակարգում ստեղծված դեմոկրատիան, ցույց տվեցին, որ այն սահմանափակ է և չի արտահայտում աշխատավորական մասսաների շահերը։ Կապիտալիստական հասարակարգում դեմոկրատիզմը, ազատությունը վայելում են սահմանափակ, բնակչության մեջ փոքրամասնություն կազմող ունևորները։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Избранные произведения, т. II, М., 1955, стр. 23.

[2] *Վ. Ի. Լենին, Երկեր, Հրատ. 4, Հատ. 25, էջ 597։*

«Կապիտալիստական հասարակության ազատությունը միշտ մնում է մոտավորապես մի այնպիսի ազատություն,— ասել է Վ. Ի. Լենինը,— ինչպիսին հին հունական ռեսպուբլիկաներում եղած ազատությունն էր, այն է՝ ազատություն ստրկատերերի համար։ Արդի վարձու ստրուկները, կապիտալիստական շահագործման պայմանների շնորհիվ, այն աստիճան ճղմված են մնում կարիքի ու աղքատության մեջ, որ «գլուխ չունեն դեմոկրատիայի», «քաղաքականության» մասին մտածելու, որ իրադարձությունների սովորական, խաղաղ ընթացքի դեպքում բնակչության մեծամասնությունը հեռացված է հասարակական-քաղաքական կյանքի մասնակցությունից»[3]։

Ուրեմն, դեմոկրատիան կապիտալիստական հասարակարգում խիստ նեղ է, «մինչև ուղն ու ծուծը երեսպաշտ է և կեղծ»,— ասել է Վ. Ի. Լենինը։ Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում դեմոկրատիզմը դառնում է ժողովրդական, ընդլայնվում է այն, բայց պրոլետարական դիկտատուրան դառնում է ճնշման մի օրգան կապիտալիստների, շահագործողների նկատմամբ՝ նրանց տնտեսական և քաղաքական իրավունքների սահմանափակման և վերացման ուղղությամբ։

Նշելով կապիտալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանի դեմոկրատիզմի մասին, Վ. Ի. Լենինը գրել է. «Դեմոկրատիա ժողովրդի հսկայական մեծամասնության համար և ժողովրդին շահագործողների, ճնշողների բռնի ճնշում, այսինքն՝ դեմոկրատիայից վտարում,— ահա թե ինչպիսի կերպարանափոխություն է կրելու դեմոկրատիան կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելիս»[4]։ Երբ պրոլետարիատի դիկտատուրան վերջնականապես խորտակում է կապիտալիստների դիմադրությունը, երբ կապիտալիստները որպես դասակարգ անհետանում են, երբ չկան դասակարգեր, երբ հասարակության անդամների միջև արտադրության հասարակական միջոցների նկատմամբ տարբերությունն անհետանում է, այն ժամանակ միայն «հնարավոր է և կիրականացվի իսկապես լիակատար, իսկապես առանց որևէ բացառման դեմոկրատիան»[5]— գրել է Վ. Ի. Լենինը։

Կ. Մարքսը կոմունիստական հասարակարգը բաժանում է երկու փուլի՝ առաջին կամ ստորին փուլ, և երկրորդ, կամ լիակատար կոմունիստական հասարակության փուլ։ Առաջին փուլը դա նոր-նոր է ծագում հենց կապիտալիստական հասարակությունից «և որն այդ պատճառով բոլոր տեսակետներից,— թե՛ տնտեսական, թե՛ բարոյական, թե՛ մտավոր,— դեռ կրում է իր վրա այն հին հասարակության դրոշմը, որի ընդերքից նա դուրս է եկել»[6]։ Սոցիալիզմի ժամանակ վերանում է մարդու շահագործումը մարդու կողմից, բայց սպառման առարկաները բաշխվում են դեռևս ըստ աշխատանքի և ոչ թե ըստ պահանջմունքի։ Սոցիալիզմի ժամանակ առաջ է քաշվում և ժողովրդի կողմից պաշտպանվում «Ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքը։ Մեր երկրում սոցիալիստական հասարակության ամբողջ պատմությունը վկայում է մարքս-լենինյան տեսությամբ կոմունիստական կուսակցության ղեկավարությունը, նրա վարած քաղաքականության ճշտությունը։

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հրատ. 4, հատ. 25, էջ 598։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 601։
5 Նույն տեղում, էջ 601։
6 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, 2 изд., т. 19, стр. 8.

Վ. Ի. Լենինի գլխավորած կոմունիստական կուսակցության պատմական ծառայությունն այն է,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում,— որ սա սովետական ժողովրդին զինեց սոցիալիզմի կառուցման գիտական պլանով, որը հաշվի էր առնում երկրի տնտեսական ու սոցիալական պայմանները։ Լենինյան գաղափարները նախատեսում էին երկրի ինդուստրացում, գյուղատնտեսության սոցիալիստական կոոպերացում, կուլտուրական հեղափոխության անցկացում։ Դրանք համապատասխանում էին ժողովրդական զանգվածների արմատական շահերին, որոնք ձգտում էին վերջ տալ քայքայվածությանը, տնտեսական հետամնացությանը, աղքատությանն ու խավարին»[7]։ Մեր երկրում կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու կոնկրետ ուղիները նշեց կոմունիստական կուսակցությունը Լենինի ղեկավարությամբ։ ՌԿ(բ)Կ X համագումարն ընդունեց նոր տնտեսական քաղաքականության (նէպ) անցնելու մասին որոշումը, «որը սոցիալիզմի ուղու կարևոր ու անհրաժեշտ էտապն էր»[8]։

Այդ քաղաքականության անշեղ կենսագործման հետևանքով հաղթահարվեց քայքայվածությունը, ստեղծվեց սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը, հզոր զարգացում ապրեց սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը, հաստատվեց և ամրապնդվեց քաղաքի և գյուղի միջև տնտեսական շաղկապը, ամրապնդվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, դուրս մղվեցին և վերացվեցին կապիտալիստական տարրերը, ապահովվեց սոցիալիզմի հաղթանակը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ երկիրը ենթարկվեց սոցիալիստական ինդուստրացման, լուծվեց սոցիալիզմի կառուցման հանգուցային խնդիրը, սոցիալիստական հիմունքներով վերակառուցվեց գյուղատնտեսությունը, որը ամենաբարդ և դժվարին խնդիրն էր պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո։ Իրագործվեց կուլտուրական հեղափոխությունը, որը սոցիալիզմի հաջող կառուցման անհրաժեշտ պայմանն էր։

Շնորհիվ սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի կենսագործման, արդեն 1930-ական թվականների կեսերին երկիրը ապրեց սոցիալ-քաղաքական լուրջ վերափոխություններ։ Ստեղծվեց սոցիալիզմի տնտեսական բազան։ Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու այդ ժամանակաշրջանը առաջին հերթին բնորոշվում է նրանով, որ վերացվեցին բոլոր շահագործող դասակարգերը և դասակարգային խավերը, ոչնչացվեցին մարդու կողմից մարդու շահագործումը ծնող բոլոր հնարավորությունները։

Սոցիալ-քաղաքական լուրջ փոփոխությունների ենթարկվեցին մեր երկրի նաև աշխատավորական դասակարգերը։ Սոցիալիզմի կառուցման շնորհիվ վերացվեցին մասնավոր ձեռնարկությունները, արհեստանոցները։ Դրանք վերածվեցին կամ պետական ձեռնարկությունների, կամ տրվեցին տնայնագործական կոոպերացիային։ Այդ վերափոխման արդյունքը եղավ այն, որ մեր երկրում, այդ թվում նաև Հայաստանում, ստեղծվեց միասնական բանվոր դասակարգ։ Է՛լ ավելի ուժեղացավ բանվոր դասակարգի ղեկավար դերը սովետական հասարակարգի ամբողջ ընթացքի վրա։

Արմատական վերափոխությունների ենթարկվեցին գյուղացիական տնտեսությունները և գյուղացիական դասակարգը։ Վերացվեցին մանր գյուղացիական

---

7 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին» ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի թեզիսները, Երևան, 1967, էջ 15։

8 Նույն տեղում, էջ 15։

տնտեսությունները և ստեղծվեց սոցիալիստական տնտեսության ձևերից մեկը՝ կոոպերատիվ-կոլտնտեսայինը։ Տնտեսական բաղիսում տեղի ունեցած այդ վիթխարի փոփոխությունը, լրջորեն փոխեց նաև սոցիալիստական հասարակության վերնաշենքը։ Վերացավ շահագործող կուլակային դասակարգը։ Վերացավ նաև գյուղի շերտավորումը։ Նախկին միջակ, չքավոր և բատրակ սոցիալական խավերի փոխարեն, ստեղծվեց ամբողջովին նոր միասնական դասակարգ՝ կոլտնտեսային գյուղացիությունը։ Գյուղատնտեսությունը փոխադրվելով սոցիալիստական ուղու վրա, գյուղացիությունը մասնավոր սեփականատիրական, մանր ապրանքարտադրողների դասակարգից, դարձավ սոցիալիզմ կառուցող դասակարգ։ Փոխվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ձևը։ Եթե մինչ այդ սովետական պետության քաղաքական հիմքը հանդիսանում էր այն, որ բանվոր դասակարգը հենվում էր չքավորի վրա, դաշինք էր կնքում միջակի հետ և գրոհում էր կուլակության և մյուս շահագործողների վրա, ապա սոցիալիզմի հաղթանակով, նախ դաշինքի հիմքում դրվեց սոցիալիստական երկու տնտեսությունների՝ արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրական համագործակցությունը, և, երկրորդ, բանվոր դասակարգը դաշինք էր կնքում ամբողջ գյուղացիության հետ, սոցիալիստական նոր դասակարգի՝ կոլտնտեսային գյուղացիության հետ։

Եթե Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից մինչև 1930-ական թվականների սկզբները սովետական հասարակությունը զարգանում էր դասակարգային սուր պայքարի ու հակամարտությունների պայմաններում, ապա սոցիալիզմի հաղթանակից հետո, այն զարգանում էր սոցիալիստական երկու դասակարգերի՝ բանվորների և կոլտնտեսային գյուղացիների սերտ համագործակցությամբ ու փոխադարձ օգնությամբ։ Սոցիալիստական այդ երկու դասակարգերի դաշինքի ղեկավարը նորից մնում էր բանվոր դասակարգը։ Սոցիալ-քաղաքական այդ վիթխարի վերափոխությունների շնորհիվ, վերացան բանվոր դասակարգի և գյուղացիության միջև գոյություն ունեցող արմատական դասակարգային հակասությունները և մնացին որոշ տարբերություններ միայն, որոնք կապված են սոցիալիստական տնտեսության երկու ձևերի առանձնահատկությունների հետ։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում որակական լուրջ փոփոխություններ ապրեց նաև մտավորականությունը։ Ստեղծվեց նոր, սոցիալիստական մտավորականություն։ Բայց սոցիալիզմի ժամանակ դեռևս մնում են դասակարգեր, դասակարգային տարբեր խմբեր, մեկը մյուսից որոշ չափով տարբերվելով հասարակական արտադրության մեջ ունեցած իրենց դերով, արտադրական միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքով, հասարակական աշխատանքի կազմակերպման դերով, հասարակական բարիքների ստեղծման եղանակով։ Այդ տարբերությունները, իհարկե, էական չեն։ Սոցիալիզմի հաղթանակով հիմք դրվեց սովետական ժողովրդի քաղաքական ու բարոյական միասնությանը։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, սոցիալիստական շինարարության պրոցեսում իրագործվեց ազգային հարցի լենինյան ծրագիրը, հաստատվեց մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների սոցիալիստական եղբայրությունը։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը լենինյան ազգային քաղաքականության կենսագործումով, սոցիալիզմի կառուցումով «արթնացրին և պատմական ինքնու-

րույն ստեղծագործության բարձրացրին անցյալում հետամնաց ժողովուրդներին, իսկ նրանցից մի քանիսին փրկեցին ֆիզիկական մահացումից»[9]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին նվիրված ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսների այս տողերը ամբողջովին վերաբերվում են նաև հայ ժողովրդին։ Մի ժողովուրդ, որը դաշնակցականների արյունոտ տիրապետության տարիներին կանգնած էր անդունդի եզրին և անխուսափելի էր դարձել նրա ֆիզիկական բնաջնջումը, հայ ժողովրդին օգնության եկավ ռուս մեծ ժողովուրդը, Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման գլխավոր գործիքը սովետական պետությունն է, որի բարձրագույն սկզբունքը բանվոր դասակարգի դաշինքն է գյուղացիության հետ՝ բանվոր դասակարգի ղեկավար դերի պայմաններում։ «Սովետական պետությունն այն մեծագույն ուժն էր, որն ընդունակ եղավ կազմակերպելու միլիոնավոր մարդկանց ստեղծագործ աշխատանքը, ապահովելու նոր էկոնոմիկայի ու կուլտուրայի ստեղծումը, ժողովրդի բարեկեցության վերելքը»[10]։

Սոցիալիզմի հաղթանակը օրինականորեն հաստատվեց ու վավերագրվեց 1936 թ. դեկտեմբերին սովետների 8-րդ համագումարի ընդունած ՍՍՀՄ սահմանադրությամբ։

Ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պատերազմից հաղթանակով դուրս եկան սովետական ժողովուրդը, սոցիալիստական պետական և հասարակական կարգը։ Պատերազմում հաղթանակեցին մեր երկրի զինված ուժերը։ Այդ նաև սովետական թիկունքի հաղթանակն էր։

«Միավորված լինելով միասնական կամքով, միասնական ավյունով, բանվորները, գյուղացիներն ու մտավորականները, տղամարդիկ ու կանայք, կոմունիստներն ու կոմերիտականները, որոնց դաստիարակել էին կուսակցությունն ու սովետական իշխանությունը, ընդունակ եղան կատարելու մի սխրագործություն, որի հավասարը դեռ չէր իմացել պատմությունը»[11]։ Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակը համաշխարհային պատմական նշանակություն ունեցավ։ «Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Եվրոպայի և Ասիայի երկրներում սոցիալիստական հեղափոխությունների զարգացման ու հաղթանակի, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծման համար։ Լայնորեն զարգացավ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը։ Ամրապնդվեցին սոցիալիզմի ու դեմոկրատիայի միջազգային ուժերը, թուլացան իմպերիալիզմի և ռեակցիայի դիրքերը»[12]։

Դեռևս պատերազմը չավարտված, կոմունիստական կուսակցությունը մոբիլիզացրեց սովետական ժողովրդի ուժերը արագությամբ վերացնելու պատերազմի պատճառած նյութական վնասները։ Բավական է ասել, որ ֆաշիստներն ավերակույտերի վերածեցին 70 հազարից ավելի քաղաքներ, ավաններ, գյուղեր ու շեներ։ Երկիրը կորցրել էր ազգային հարստության մոտավորապես 30 տոկոսը[13]։ Պատերազմը խլեց սովետական 20 միլիոն մարդու կյանք։ Միայն

---

9 ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի թեզիսները, էջ 21։

10 Նույն տեղում, էջ 22։

11 Նույն տեղում, էջ 29—30։

12 Նույն տեղում, էջ 30։

13 Նույն տեղում, էջ 27—28։

սոցիալիստական սիստեմն էր, որ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կարճ ժամանակամիջոցում վերացրեց պատերազմի հասցրած նյութական վիթխարի վնասները։ Արդեն 1948 թ. մեր երկրի արդյունաբերության համախառն արտադրանքը հասավ նախապատերազմյան 1940 թ. մակարդակին։ Մեծ չափերով առաջ մղվեց տեխնիկայի զարգացումը, որի շնորհիվ աճեց աշխատանքի արտադրողականությունը։

Բայց դրությունը բարդ էր գյուղատնտեսության ընդավառում, որն անչափ մեծ կորուստներ էր ունեցել պատերազմի հետևանքով։ «Կոլտնտեսային գյուղացիությունը և սովխոզների բանվորները,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում,— դրսևորելով պարտքի բարձր գիտակցություն և աշխատանքային անձնվիրություն, կարճ ժամանակում վերականգնեցին պատերազմից ավերված տնտեսությունը։ Արդեն 1950 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի թողարկումը հասավ նախապատերազմյան մակարդակին»[14]։ Բայց հաջորդ տարիներին սահմանափակվեցին գյուղատնտեսության ֆինանսավորման և նյութա-տեխնիկական ապահովման հնարավորությունները։ Լրիվ չէին օգտագործվում գյուղատնտեսության զարգացման ռեզերվները, խախտվել էին կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքները, վատ էր օգտագործվում գյուղատնտեսական տեխնիկան, թույլ էր մասսայական-քաղաքական աշխատանքը գյուղում և այլն։ 1950-ական թվականների սկզբներին զգալիորեն բարելավվեց Սովետական Միության միջազգային դրությունը, նվազեցին պաշտպանության նպատակով ծախսվող գումարները։ Այդ ամենը հաշվի առնելով ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1953 թվականի) պլենումը միջոցներ ձեռք առավ «գյուղատնտեսությանը նյութա-տեխնիկական օգնություն ցույց տալու և իրենց աշխատանքի արդյունքներով կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը ուժեղացնելու նպատակով»[15]։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի որոշումների հիման վրա փոխվեց գների քաղաքականությունը, բարձրացվեցին գյուղատնտեսական մթերքների պետական գնման գները, կրճատվեց կոլտնտեսություններից մթերվող գյուղատնտեսական մթերքների ծավալը, աճեց վարկավորումը, ստեղծվեց և արտադրության այդ ճյուղում ներդրվեց նոր տեխնիկա, բարձրացվեց մեքենատրակտորային կայանների դերը, ուժեղացավ քաղաքական աշխատանքը գյուղում, ակտիվացվեց գյուղական հասարակայնությունը։ Գյուղատնտեսությունը բռնեց վերելքի նոր ուղի։ Մինչև այն ժամանակ, երբ անշեղորեն կենսագործվում էին ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի որոշումները, երկրի գյուղատնտեսությունը վերելք էր ապրում, բավական է ասել, որ երկրի գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքի տարեկան աճը կազմում էր 7,6 տոկոս։ Հետագայում անտեսվեցին կուսակցության Կենտրոնական կոմիտեի այդ ձեռնարկումները։ ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965 թ.) պլենումը և կուսակցության XXIII համագումարը լայն միջոցներ մշակեցին ու սկսեցին կենսագործել գյուղատնտեսության վերելքի ուղղությամբ։

ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թ. հուլիսյան պլենումի որոշումների կենսագործման համար մղվող պայքարում վիթխարի առաջադիմություն ունեցավ տեխ-

---

14 Նույն տեղում, էջ 32։
15 Նույն տեղում, էջ 33։

նիկայի ու գիտության զարգացումը, որի շնորհիվ ծավալվեց արդյունաբերության մասնագիտացման և կոոպերացման գործը, մեծ չափերի հասան արտադրական պրոցեսների մեքենայացումը և ավտոմատացումը։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Հայաստանում ստեղծվեց առաջնակարգ ծանր ինդուստրիա՝ տեխնիկական առաջադիմության և տնտեսական հզորության հիմքը։ Հանրապետությունում մեծ չափերով ընդլայնվեց մետաղամշակման և մեքենաշինության արտադրությունը, աճեց բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների թիվը։ Արդյունաբերության բոլոր ճյուղերում տեղադրվեցին ավելի կատարելագործված մեքենաներ և սարքավորումներ։ Նյութական միջոցների արտադրության ոլորտներում կրճատվեց ծառայողների և օժանդակ աշխատողների թիվը և դրա փոխարեն մեծացավ բանվորների քանակը։

Հայաստանի բանվոր դասակարգի կյանքում բնորոշը ոչ միայն նրա քանակական, այլև որակական աճն է։ Բանվորների գերակշռող մասը աշխատում էր ձեռնարկությունների հիմնական արտադրամասերում։ Արդյունաբերության արտադրական պրոցեսների ավտոմատացումով, մեքենաների մոդեռնացումով աստիճանաբար վերանում է ձեռքի աշխատանքը։ Այդ պրոցեսում լուրջ տեղաշարժեր են կատարվում բանվորների մասնագիտացման գործում։ Նոր պրոֆեսիաներն իրենց հերթին տեխնիկական լուրջ հեղաշրջում են առաջացնում արտադրության մեջ։ Վերցնենք թեկուզ շինարարական արդյունաբերությունը։ Այն ամենահետամնաց ճյուղերից մեկն էր, արտադրությունը սեզոնային էր։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում արտադրության մեջ օգտագործվեցին էքսկավատորներ, սկրեպերներ, բուլդոզերներ, ամբարձիչներ, մեքենայացվեցին բեռնման ու բեռնաթափման, հողային, մոնտաժային, բետոնային և այլ աշխատանքներ։ Շինարարական արտադրության մեջ, հզոր տեխնիկայի ներդրումով, ոչ միայն առաջացան նոր պրոֆեսիաներ, այլև փոխվեցին արտադրության ղեկավարումն ու բնույթը, այն դարձավ ինդուստրիալ, վերացավ սեզոնայնությունը։ Ժամանակակից բանվորները տիրապետում են բազմաթիվ մասնագիտությունների։ Նրանք ձեռք են բերում տեխնիկական լայն գիտելիքներ, տիրապետում արտադրության բարձր կուլտուրային, կարողանում են հաջողությամբ զուգակցել ֆիզիկական և մտավոր ունակությունները։ Դրա շնորհիվ աշխատանքը դառնում է մարդկանց բոլոր ունակությունների դրսևորման լավագույն միջոց։

Ունիվերսալ պրոֆեսիայի նյութական հիմքը նոր տեխնիկան է, մեքենան, որոնք նույնպես գտնվում են մշտական կատարելագործման պրոցեսում։ Արտադրության մեջ յուրաքանչյուր նոր մեքենայի ներդրումը առաջ է բերում նոր պրոֆեսիա։ Իսկ դրան տիրապետելու համար բանվորին անհրաժեշտ են տեխնիկական նոր գիտելիքներ և նոր որակավորում։ Այդ գործում շահագրգռված են և բանվորները, և պետությունը։ Տարեցտարի ընդլայնվում է բաներիտ-դպրոցների, հեռակա և երեկոյան մասնագիտական միջնակարգ և բարձրագույն դպրոցների ցանցը։ Բացի դրանից, արդյունաբերական ձեռնարկություններում սիստեմատիկաբար գործում են դասընթացներ և արտադրական դպրոցներ։ Մարդու բազմակողմանի զարգացումը դառնում էր պատմական անհրաժեշտություն։

Հայաստանի բանվոր դասակարգի որակական աճի չափանիշ է նաև ռացիոնալիզատորական շարժումը։ Հանրապետության բանվոր դասակարգը դարձել է նոր տեխնիկայի հիման վրա ստեղծված արտադրության ղեկավարը։ Նա նորարարների ստեղծագործող դասակարգ է։ Հազարավոր բանվորներ, լինելով տեխնիկական խորհուրդների, կոնստրուկտորական բյուրոների անդամներ, իրենց աշխատանքի հարուստ փորձով օգնում են նոր տեխնիկայի ստեղծմանը, կատարելագործմանը և ներդրմանը։

Հայաստանի բանվոր դասակարգը լայն գործունեություն է ծավալում սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ, բարձրացնում է ժողովրդական տնտեսության այդ կարևոր ճյուղի աշխատանքի ինդուստրացման մակարդակը, ամրապնդում դաշինքը կոլտնտեսային գյուղացիության հետ։ Սոցիալիզմի լիակատար ու վերջնական կառուցման ժամանակաշրջանում լուրջ տեղաշարժ կատարվեց գյուղատնտեսության ասպարեզում։ Կոլտնտեսային արտադրությունը դառնում էր ինդուստրիալ։ Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը, աշխատատար պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը և ավտոմատացումը, քիմիայի ներդրումը գյուղատնտեսության մեջ, ոռոգման ցանցի ընդլայնումը, գյուղատնտեսության ինտենսիֆիկացումը և մասնագիտացումը, լուրջ փոփոխություններ մտցրեցին հանրապետության գյուղատնտեսական կուլտուրաների մշակման ու զարգացման ուղղությամբ։ Մեծ չափերով աճեցին կոլտնտեսային արտադրական միջոցները՝ անբաժանելի և հիմնական ֆոնդերը։ Այդ ժամանակ առանձնակի նշանակություն էր ստանում անբաժանելի ֆոնդերի քանակական աճը և կառուցվածքային կատարելագործումը։ Գյուղատնտեսական արտելներում անբաժանելի ֆոնդերը սոցիալիստական արտադրողական հարաբերությունների հիմքն են։ Եթե 1950 թ. հանրապետության կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը կազմում էին 819,5 միլիոն ռուբլի, ապա 1958 թ. կազմեցին 172 միլիոն ռուբլի։ Կոլտնտեսություններն այդ ֆոնդերը օգտագործում են ոչ միայն գյուղատնտեսության վերարտադրության, այլ նաև կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության նպատակով։ Այդ միջոցներով գյուղերում կառուցվում են դպրոցական, հիվանդանոցային, ակումբային, մանկական հիմնարկների և այլ շենքեր։ Անբաժանելի ֆոնդերը մոտ են պետական ձեռնարկությունների հիմնական ֆոնդերին։ Որքան աճում են կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը, այդքանով էլ ամրապնդվում է կոլտնտեսության էկոնոմիկան։ Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերն անձեռնմխելի են, նրանք չեն բաժանվում կոլտնտեսականների միջև, նրանք անընդհատ աճում ու ավելանում են։

Արտաքուստ կարծես ստացվում է այն տպավորությունը, թե կոլտնտեսությունների արտադրողական միջոցները և ֆոնդերը ստեղծվում են միայն կոլտնտեսականների աշխատանքով։ Բայց դա այդպես չէ։ Կոլտնտեսությունների արտադրողական միջոցների մեջ մտնում են նաև մեքենաները, որոնք ստեղծում են բանվորները և ինժեներները։ Մեքենաները, կառույցները և արտադրական մյուս միջոցները կոլտնտեսություններում ստեղծվում են նաև պետական երկարատև ու կարճատև վարկերի օգնությամբ։ Այդ գործում կարևոր դեր են կատարում հատկապես անվերադարձ վարկերը, որոնք վերջին տարիներին հատկապես զգալիորեն աճում են։ Եթե չորրորդ հնգամյակում հանրապետության գյուղատնտեսության մեջ պետական կապիտալ ներդրումները

կազմում էին 22,0 միլ. ռուբլի, 1951—1958 թթ. դրանք կազմում էին 178 միլիոն ռուբլի։

Անբաժանելի ֆոնդերը աճում են քանակապես և որակապես, նրանք ավելի են մոտենում հասարակական ֆոնդերին։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետության կոլտնտեսություններում ծավալվեց վիթխարի շինարարություն, որ հիմնականում անց է կացվում պետության վարկերի օգնությամբ։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ կոլտնտեսային և պետական սեփականության միջև գոյություն ունեցող տարբերությունը դառնում է հարաբերական։ Կոլտնտեսային ու պետական արտադրությունը ավելի են մոտենում միմյանց։ Անբաժանելի ֆոնդերի զարգացման ընդհանուր տենդենցն այն է, որ նրանցում աստիճանաբար ուժեղանում է համաժողովրդական բնույթը։

Կոլտնտեսային և պետական սեփականության մերձեցմանը մեծ չափով նպաստում են գյուղատնտեսության մեքենայացումը, ինտենսիֆիկացումը և քիմիացումը։ Գյուղատնտեսության տեխնիկական զինվածության բարձրացումով ուժեղանում է մերձեցումը պետական և կոլտնտեսային սեփականությունների միջև։ Կրճատվում է աշխատող ուժը գյուղում և այն օգտագործվում է պետական ձեռնարկություններում։

Կոլտնտեսային գյուղը ապրում է խորը վերափոխություններ։ Եթե 1950 թ. էլեկտրիֆիկացված էր հանրապետության կոլտնտեսություններից միայն 403-ը, ապա 1958 թ. էլեկտրիֆիկացվեց 708-ը, զգալի չափով աճել է էլեկտրաէներգիայի օգտագործումը գյուղատնտեսության արտադրության մեջ։ Աճել է տրակտորային պարկը։ Եթե հանրապետությունում 1950 թ. կար 2055 տրակտոր և 295 կոմբայն, ապա 1958 թ. դրանց թիվը հասավ համապատասխանաբար 3444-ի և 1134-ի։ Գյուղատնտեսական աշխատանքի աշխատատար շատ պրոցեսներ մեքենայացված են։ Տեղի էր ունենում կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության նկատելի կատարելագործում, այն արտահայտվում էր ինչպես կազմակերպչական, նույնպես և տնտեսական կառուցվածքի մեջ։

Ինչպես պերճախոս ցույց է տալիս մեր երկրի շատ հանրապետությունների, երկրամասերի, մարզերի փորձը, կոլտնտեսային և պետական արտադրության մերձեցման գործում առաջին հերթին հսկայական դեր է կատարում միջկոլտնտեսային կոոպերացիան։ Զարգանում են միջկոլտնտեսային արտադրական կապերը, որոնք հնարավորություն են տալիս մասնագիտացնելու և համակենտրոնացնելու գյուղատնտեսական արտադրությունը, հասնելու տնտեսական բարձր ցուցանիշների։ Միջկոլտնտեսային շինարարական կազմակերպությունները ապահովում են ֆերմաների կոմպլեքսային մեքենայացման, նոր տեխնոլոգիայի ներդրման գործը։

Միջկոլտնտեսային կոոպերացիան կոլտնտեսությունների զարգացման նոր աստիճան է։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծվեցին հանրապետության բոլոր շրջաններում, անգամ ավաններում և գյուղերում։ Այդ արդյունաբերական ձեռնարկությունները, անմիջականորեն ներգործում են գյուղի սոցիալական պայմանների փոփոխման, կոլտնտեսային արտադրության զարգացման, գյուղի կյանքում քաղաքի առաջավոր հատկանիշների ձևավորման վրա։

Գյուղատնտեսական հումք ստացող արդյունաբերական ձեռնարկությունները պայմանագրային հարաբերությունների մեջ են մտնում կոլտնտեսությունների հետ։ Այդ պայմանագրերն ամրացնում են կոլտնտեսություններում և ձեռնարկություններում արտադրական կարգապահությունը, նպաստում քաղաքի և գյուղի միջև ստեղծելու ավելի կատարելագործված հարաբերություններ։

Ինչպես ցույց է տալիս առաջավոր վարձը, միջկոլտնտեսային, կոլտնտեսային-պետական համատեղ ձեռնարկությունների ստեղծումով, առաջանում է սեփականության այնպիսի ձև, որը որոշ չափով դուրս է գալիս կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության սահմաններից, նա իր փաստական վիճակով մոտենում է համաժողովրդական սեփականությանը, աստիճանաբար դառնում է համաժողովրդական տնտեսություն։

Այսօր կոլտնտեսականներն իրենց հագուստով, տնային կահկարասիներով և կահավորումով ավելի քիչ են տարբերվում քաղաքի բնակիչներից։ Հանրային արտադրությունից ստացված եկամուտների աճի հիման վրա փոխվում է գյուղացու կենցաղը և նրա ընտանիքի ծախսերի կառուցվածքը։ Այժմ ավելանում են կոլտնտեսականի հագուստի, կոշիկի, կուլտուր-կենցաղային կարիքների վրա կատարվող ծախսերը։

Հայաստանի գյուղերի մի մասում, հատկապես տնտեսապես ուժեղ կոլտնտեսություններում, տեղի են ունենում քաղաքի կենցաղի և բնակարանային պայմանների ավելի շատ ընդօրինակում։ Եթե չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանի գյուղերում կառուցվել է 15,1 հազար տուն, ապա 1951—1958 թթ. կառուցվել է 52,9 հազար տուն, որից 1956—1958 թվականներին՝ 27,1 հազար տուն։ Նոր կառուցվող գյուղերը փաստորեն դարձել են քաղաքատիպ ավաններ, որոնք ունեն լայն կոմունալ հարմարություններ, ասֆալտապատ փողոցներ, ռադիո և հեռուստացույց, կուլտուրայի օջախներ, կենցաղային սպասարկում։ Բարձրացել է կոլտնտեսականների կուլտուրայի ընդհանուր մակարդակը։ Բարձրացել է հատկապես գյուղական երիտասարդության կուլտուրական մակարդակը։ Հիմնականում գյուղական երիտասարդությունն է, որ ղեկավարում ու գործի է դնում գյուղատնտեսական տեխնիկան։ Երիտասարդությունը սկսում է տիրապետել գյուղատնտեսական բազմատեսակ տեխնիկային, տրակտորիստը սովորում է ղեկավարել նաև կոմբայնը, ձմեռը, երբ կանգնած են տրակտորն ու կոմբայնը, մասնակցում է ֆերմաների կոմպլեքսային մեքենայացմանը և այլն։ Հանձին երիտասարդության, գյուղում աճում է նոր գյուղացիություն, որն ունի միջնակարգ կամ բարձրագույն կրթություն, կապված գրականության, գիտության, արվեստի, քաղաքականության հետ։ Այդ երիտասարդությունն է, որ սոցիալիստական գյուղը առաջ է տանում։

Գյուղում կենցաղի հասարակական սպասարկման տարբեր ձևերի զարգացումը լուրջ փոփոխություններ է առաջացնում արտելում, է՛լ ավելի են մերձենում պետական և կոոպերատիվ կոլտնտեսային սիստեմները։ Կոլտնտեսությունների դերը գյուղական բնակչության կյանքում անշեղորեն աճում է։ Կոլտնտեսությունները շահագրգռված են արտելի անդամներին ապահովելու բնակարանով, սննդով, գլխավորում են երիտասարդների դաստիարակության գործը, կազմակերպում են կոլտնտեսականների հանգիստը, բուժումը, բարձրացնում են նրանց կուլտուր-կրթական մակարդակը և այլն։ Կոլտնտեսականի կյանքում դրանք դառնում են օրինաչափ երևույթներ, անհրաժեշտություն,

որոնք իրենց արտահայտությունն են գտնում գյուղացիների ապրելակերպի և մտածելակերպի մեջ։ Այդ փոփոխությունների շնորհիվ ամրանում է անհատի կապը կոլեկտիվի հետ և աստիճանաբար ընդգրկում է գյուղացու կյանքի բոլոր կողմերը։ Գյուղական երիտասարդության մեծ մասը ձգտում է բարձրացնելու իր գիտա-տեխնիկական ու կրթական մակարդակը հեռակա ուսուցման միջոցով։ Բուհերի և տեխնիկումների հեռակայողների զգալի մասը կազմում է գյուղական երիտասարդությունը։ Կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման շնորհիվ շատ կոլտնտեսականների համար աշխատանքը դարձել է իսկական ստեղծագործություն։ Փոխվելով գյուղացու ապրելակերպը և մտածելակերպը, փոխվում է նաև նրա սոցիալական բնույթը։ Գյուղացին աստիճանաբար կորցնում է իր դասակարգային գծերը և բանվոր դասակարգի ու մտավորականության հետ աստիճանաբար գնում է դեպի անդասակարգ կոմունիստական հասարակարգ։ Նախկինում խեղճ, ճնշված գյուղացին դարձել է եռանդուն, համարձակ, հասարակական ու քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, կրթված մարդ։

Այդ փոփոխություններն ավելի ցայտուն են դրսևորվում հայ գեղջկուհու կյանքում։ Նախասովետական գրականության մեջ շատ է խոսվել հայ կնոջ թշվառ վիճակի մասին, այսօր այդ վիճակը չկա։ Գեղջկուհիները կոլտնտեսությունում դարձել են հզոր ուժ, հասարակական կյանքի ակտիվ մասնակից ու կառուցող։ Գեղջկուհու այդպիսի որակական մեծ փոփոխությունը դրական ներգործություն է թողնում նաև աճող սերնդի դաստիարակության վրա։ Նոր մարդու ձևավորմանը նպաստում են ստեղծված ապրելակերպը, տնտեսական-քաղաքական, հոգեբանական և գաղափարական պայմանները։ Աճող սերունդը իր ժամանակի մեծ մասն արդեն անց է կացնում կոլեկտիվում (մանկապարտեզ, պիոներական կազմակերպություն, դպրոց, կոմերիտական կազմակերպություն, ինքնագործ խմբակներ և այլն)։

Սոցիալիզմի լիակատար ու վերջնական կառուցման ժամանակաշրջանում լուրջ տեղաշարժեր կատարվեցին նաև սովետական մտավորականության կյանքում։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ակտիվացավ մտավորականության գործունեությունը. նա իր ուժերն ամբողջովին ի սպաս դրեց մեր երկրի զարգացման, սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության գործին։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ընդլայնվեց ուսումնական ցանցը, ստեղծվեցին բազմաթիվ գիտական ու գիտա-հետազոտական հաստատություններ ու ինստիտուտներ, ավելացավ մտավորականների թիվը, ուժեղացան նրանց կապերը աշխատավորական լայն մասսաների հետ։ Գրողներն ու արվեստագետները, պատմաբաններն ու տնտեսագետները, փիլիսոփաներն ու իրավագետները ավելի լայնորեն սկսեցին լուսաբանել սովետական մարդկանց, բանվորների և կոլտնտեսականների ստեղծագործական աշխատանքը, մեր սոցիալիստական հայրենիքի գեղեցիկ առօրյան։ Գիտության ու տեխնիկայի նվաճումներն ավելի լայնորեն ներգրվեցին ժողովրդական տնտեսության մեջ։

Մտավորականության ստվար շերտ ստեղծվեց հատկապես գյուղում։ Կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ մտավորականությունը բեղմնավոր գործունեություն է ծավալում նաև գյուղում։ Նա հարյուրավոր ու հազարավոր լավ գործերի նախաձեռնողը և կենսագործողն է, գյուղական բնակչության կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացնողը։

Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում լուրջ տեղաշարժեր կատարվեցին քաղաքի ու գյուղի, ֆիզիկական ու մտավոր աշխատանքի հարաբերությունների մեջ։ Արդյունաբերության մեքենայացումը, արտադրական պրոցեսների ավտոմատացումը, ինչպես նշեցինք վերևում, լուրջ փոփոխություններ մտցրին բանվորի աշխատանքում։ Բանվորն աստիճանաբար դառնում է բազմաթիվ մասնագիտությունների տեր, բարդ մեքենաների ղեկավար։ Դա մի պրոցես է, որը հասցվելու է ֆիզիկական ու մտավոր աշխատանքի, բանվորի և մտավորականի աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունների վերացմանը։

Կոլտնտեսային արտադրությունը դառնում է ինդուստրիալ։ Արդյունաբերության օրինակով գյուղատնտեսության աշխատատար շատ պրոցեսներ մեքենայացվում և ավտոմատացվում են։ Գյուղատնտեսության մեջ աճում է մեխանիզատորների թիվը։ 1959 թ. Հայաստանի յուրաքանչյուր 25 կոլտնտեսականներից մեկը մեխանիզատոր էր։ Դա վկայում է գյուղատնտեսության մեջ տեղի ունեցող նոր, որակական փոփոխությունների, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների աստիճանական վերացման մասին։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության կուլտուր-տեխնիկական մակարդակի անընդհատ բարձրացումը աստիճանաբար հասցվում է մտավորականության մակարդակին, գյուղի կուլտուր-կենցաղային պայմանները հասցվում են քաղաքի մակարդակին։ Այսպիսով, «Սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովրդի հեղափոխական-վերակերտիչ գործունեության գլխավոր արգասիքն է»[16]։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, ամրապնդվեց Սովետական Միության տնտեսական և պաշտպանական հզորությունը, համաշխարհային ասպարեզում ուժերի փոխհարաբերությունը փոխվեց հօգուտ սոցիալիզմի, մեր երկրում կապիտալիզմի վերականգնումը դարձավ անհնարին, ապահովվեց սոցիալիզմի վերջնական հաղթանակը։

Հասարակության սոցիալիստական վերափոխումը անչափ բարդ գործ էր։ «Պատմության մեջ առաջին անգամ սոցիալական վերափոխումները կատարվում էին հեղափոխական գործողության գիտականորեն հիմնավորված ծրագրի համաձայն։ Կուսակցությունից պահանջվում էին քաղաքական հասունություն, կազմակերպվածություն և տոկունություն, սոցիալիզմի կառուցման կուրսի հետևողական կիրառում, ստեղծագործական համարձակություն՝ տեսական ու գործնական բարդ պրոբլեմները մշակելիս, նոր հասարակարգի բաստեղծման ուղիների, մեթոդների ու միջոցների բազմակի ստուգում»[17]։ Կոմունիստական կուսակցության կողմից մարքսիզմ-լենինիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների անշեղ կենսագործումը և պաշտպանությունը թշնամիներից և օպորտունիստներից հանդիսացավ սոցիալիզմի հաղթանակի անհրաժեշտ պայմանը։

---

16 «ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները», էջ 34։
17 Նույն տեղում, էջ 35։

«ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի պատմական նշանակությունն այն է, որ մեր կուսակցության ու ժողովրդի փորձով նոր հասարակարգի կառուցման մարքս-լենինյան տեսությունը գտավ իր լայն և անհերքելի հաստատումը»[18]։ Սոցիալիզմի հաղթանակի ուղին, նրա փորձը, ստեղծագործաբար օգտագործվում է մյուս ժողովուրդների կողմից։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սոցիալիզմի վերջնական հաղթանակը մեր երկրում հերքեց շահագործողների հերյուրանքները սովետական սիստեմի անխուսափելի կործանման մասին։ «Իմպերիալիզմի ճնշմանը տոկալու, նոր հասարակարգ կառուցելու, սոցիալիզմի նվաճումները պաշտպանելու համար հեղափոխական ժողովուրդը դարձավ ռազմիկ, քաղաքական մարտիկ, անձնվեր աշխատավոր։ Նա դիմացավ չտեսնված ծանր պայքարին և ստեղծեց տնտեսական, ռազմական, քաղաքական և հոգևոր մի հզոր պոտենցիալ, որը սոցիալիզմի հուսալի հենարանն է աշխարհում։

Սոցիալիստական շինարարության մեջ ներդրված են սովետական մարդկանց բոլոր սերունդների աշխատանքը, խիզախությունը՝ բանականությունը։ Մարդկության հիշողության մեջ ընդմիշտ կմնան սոցիալիզմի ռահվիրաների և առաջին կառուցողների պատմական մեծագործությունները»[19]։

Սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ավարտելով սոցիալիզմի լիակատար ու վերջնական կառուցումը, թևակոխեց իր զարգացման նոր, կոմունիզմի կառուցման էտապը։ Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր նախադրյալներ ստեղծեց կոմունիստական հասարակարգի կառուցման անցնելու համար։

---

18 Նույն տեղում, էջ 36։

19 Նույն տեղում, էջ 38։